ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱՆ ԱՎԱԳՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ավագյան,

ի պատասխան Ձեր 25.12.2023թ. հ.068 գրության՝ տեղեկացվում է, որ Երևանի քաղաքապետի կողմից 2018 թվականի դեկտեմբերի 26-ին ընդունվել է «Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հրապարակային սակարկությունների կազմակերպումն ու անցկացումը կանոնակարգելու մասին» N 3758-Ա որոշումը:

Նշված որոշմամբ հաստատվել է Երևանի քաղաքապետարանի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հրապարակային սակարկությունների /աճուրդների/ կազմակերպման և անցկացման ու Երևանի քաղաքապետարանի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հրապարակային սակարկություններով /մրցույթներով և աճուրդներով/ տրամադրման և օտարման նպատակով հողամասերի ընտրության և քաղաքաշինական ծրագրավորման հանձնաժողովների կազմերը:

Միաժամանակ տեղեկացվում է, որ անշարժ գույքերի օտարման վերաբերյալ ներկայումս Երևանի քաղաքապետի 26.12.2018թ. N 3758-Ա որոշման հիման վրա ձևավորված հանձնաժողովների կողմից հաստատված աճուրդներ հայտարարված չեն:

Տեղեկացվում է նաև, որ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից աճուրդային եղանակով օտարման ենթակա հողամասերի վերաբերյալ տվյալները փոխանցվում է «Երևանի քաղաքապետարանի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հրապարակային սակարկությունների (աճուրդների) կազմակերպման և անցկացման հանձնաժողով»-ին: Ներկայումս տարվում են նախապատրաստական աշխատանքներ 2024 թվականին որոշ հողամասեր հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ